



Այս լուսանկարի հետ կապված պատմությունն այսօր կարող է անհավանական թվալ: Անհավանական՝ հատկապես երիտասարդ սերնդի համար: Եվ լավ է, որ այդպես է: Լավ է, որ մեր հոգևոր կյանքում վերջին տարիներին կատարված փոփոխություններն այնքան են շրջադարձային, որ ոչ հեռու անցյալում տիրող մթնոլորտը, հոգեբանությունը, անցյալի արժեքների և բազում այլ երևույթների նկատմամբ վերաբերմունքը այսօր, այո՛, կարող են անհավանական թվալ:

Այսպես ուրեմն, այս լուսանկարը «Հայրենիքի ձայն» թերթի (որի խմբագիրն էի) 1967 թվականի հունիսի 14-ի համալուծում պիտի տպագրվեր: Նույնիսկ տպագրվեց, բայց...

... Առավոտյան աշխատանքի գալով մի անհավատալի լուր իմացանք, լսեցինք, որ Աշտարակի շրջանի Ուջան գյուղում Անդրանիկ գործարարի հուշարձանն են բարձրացրել:

— Ո՛վ... Ինչպե՛ս...  
Ոչ ոք մանրամասները չգիտեր:

Մեկնեցի Ուջան: Հուշարձանը մի այնպիսի հոծ բազմությամբ էր շրջապատված, որ հնարավոր չէր մտնենալ անգամ:

Մանրամասներն այնտեղ իմացա. ուջանցիները լուր ու մունջ հանգանակություն են արել, վստահելի մի քանակագործի՝ Միրայել Ավետիսյանին պատվիրել հուշարձանը ու այդ գիշեր նույնքան լուր ու մունջ բարձրացրել գյուղի կենտրոնում:

Հասկանալի է, տեղական իշխանությունները վրդովվել էին, երկյուղել, կարգադրել էին անմիջապես հանել «ապօրինի» հուշարձանը: Բայց, կարծում եմ, իրենք էլ հավատացած չեն եղել, թե իրենց կարգադրությունը կկատարվի... Սարի պես կանգնած սասունցիներ. ո՛վ կհամարձակվեր մտնենալ ու ձեռք տալ հուշարձանին:  
Կանգնած մտածում էի. ի՞նչ անել, թույլ կտա՞ն, արդյոք, «ապօրինի» հուշարձանի լուսանկարը թերթում տպագրել, գրել այդ մասին... Հագիվ թե: Ի սեր արդարության ասեմ, որ չէի կարծում, թե ուջանցիների «նախաձեռնությունը» որևէ մեկի, նույնիսկ ղեկավար աշխատողների, սրտով չէ: Բայց կար մի լուրջ հանգամանք. երբ մեր թերթերում, գրքերում Անդրանիկի մասին որևէ բան էր տպագրվում, հարևան Ադրբեջանի ղեկավարներն իսկույն կրենլի դարպասներն էին ծեծում, թե՛ լսե՛ք, լսե՛ք, Հայաստանում

# ԼՈՒՍԱՆԿԱՐ, ՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

փառաբանում են «մոլի մացիոնայիստ, դաշնակցական, ադրբեջանական ժողովրդի ռիսեթիմ թշնամի Անդրանիկին»: Եվ դա այն դեպքում, երբ իրենք Բաքվում Ղաչաղ Նաթի կոչեցյալ մի ալազակի հուշարձանն էին բարձրացրել, «ազգային հերոս» հռչակել մեկին, որը հայկական գյուղերը թալանելով ու անգն մարդկանց սպանելով էր միայն ըզբաղվել և որի արյունոտ ասպատակությունների մասին Մաքսիմ Գորկին ժամանակին հողված է գրել ու պատմել ճշմարտությունը:  
Այդպիսին էին, այո՛, հանգամանքները, և մտածում էի. ինչպե՛ս անել, վաղը լուրը կհասնի Սփյուռք, մյուս օրը գրոսաշրջիկներ կգան, կնկարեն հուշարձանը, կտպագրեն թերթերում, հողվածներ կգրեն, իսկ մեր լուրջությունը ինչպե՛ս կբացատրեն, չեն՞ դատարարտի... Ուրեմն, պետք է շտապ տպագրել հուշարձանի լուսանկարը: Մեղքս ինչ թաքցնեմ, կասկածում էի նաև. հուշարձանը կմնա՞ իր տեղում, շատ վերևներից չե՞ն փորձի հանել...

Ուրեմն, առավել, քան շտապ հարկավոր էր լուսանկարը տրպագրել և թերևս այդ փաստով կանխել վտանգը:  
Վերադառնալով խմբագրատուն, փնտրեցի, գտա մեր լուսանկարչության վարպետներից մեկին՝ Նեմրոթին, և խնդրեցի մեկնել Ուջան ու լուսանկարել հուշարձանը:  
Նեմրոթն ասաց.  
— Ես արդեն մտածել եմ, թե ինչ պիտի անեմ. պիտի հավաքեմ Անդրանիկի ողջ մընացած զինվորներին, նստեցնեմ պատվանդանի տակ ու այդպես նկարեմ...  
— Հիանալի է...  
... Թերթի հերթական համարի վերջին էջի ճակատին ամբողջությամբ տրամադրեցինք այդ նկարին:  
Բայց կասկած կար մեջս. գրաքննիչն, արդյոք, չի՞ կանխի տպագրությունը: Փառք աստծո, չառարկեց: Հանգիստ խղճով գնացի տուն ու քնեցի:  
Բայց հաջորդ օրվա առավոտը շանթ ու կայծակով դիմափորեց ինձ:

Թերթն արգելել էին, կարգադրել այրել...  
Չանգահարեցի արգելողներին, որ երկուսն էին:  
Ոչ մեկը չէր ուզում հանձն առնել, թե Անդրանիկի պատճառով են արգելել թերթը: Իսկ իրենց պատճառաբանությունները ծիծաղելի էին:  
Մեկն ասաց.  
— Գիտես ինչ, այն գյուղացիները, որ նստած են հուշարձանի տակ, շատ վատ են հագնված, ինչպե՛ս կարելի է մեր մարդկանց այդպես ներկայացնել արտասահմանին...  
— Ծառ լավ, — ասացի, — նորից կուղարկեմ լուսանկարչին, թող այս անգամ լայնեզր գլխարկներով ու փողկապնելով նկարի:  
Հեռախոսափողը դրեց:  
Մյուսն սվելի դիվանագետ գտնվեց.  
— Այդ համարում Արաբական խաղիֆայի արշավանքների մասին հողված ես տպագրել. ի՞նչ կարիք կար: Արաբ ժողովուրդը հերոսական պայքար է մղում Իսրայելի գավթիչների դեմ, իսկ դու հողված ես տպագրում...  
— «Պատմության քառուղիներով» հողվածաշար ենք տրպագրում, հասել ենք այդ ժամանակաշրջանին... Բացի այդ, արաբ ժողովրդի դեմ չենք գրել, այլ արաբական խաղիֆայի:  
Ինչ որ է: Թերթի այդ համարն այրվեց:  
Վերջերս ինչ-որ գրքում մի ասույթ կարդացի ու շատ հավանեցի. յուրաքանչյուր այրված գիրք ինչ-որ չափով լուսավորում է շրջապատը... Խորիմաստ ասույթ է. թեև գիրքը (կամ թերթը) այրվում է, այո՛, բայց փաստն ինքնին սկսում է շարժել մարդկանց միտքը, նրանց մեջ բողոք արթնացնել՝ գի՞րքն էլ այրեն...  
Գիտեի, ասել էի, որ որոշել եմ ինձ ազատել աշխատանքից: Բայց սխառնաբոլ միայն այդ լուսանկարը չէր: Դեռ 1965 թվին «Հայրենիքի ձայնի» հրատարակությանը նախապատրաստվելիս թերթին աշխատակցելու առաջարկությամբ նամակներ էի հղել Սփյուռքի շատ մտավորական-

ներին՝ այդ թվում Համաստեղին, Արամ Հայկազին, Մուշեղ Իշխանին, որոնք այն ժամանակ «հակառակորդներ» էին համարվում: Մուշեղ Իշխանը խոսք և մի հրաշալի բանաստեղծություն էր ուղարկել, որ իսկույն տպագրվել էր թերթում: Դա Մ. Իշխանի՝ հայրենիքում տպագրված առաջին բանաստեղծությունն էր: Տպագրվեց նաև Արամ Հայկազի խոսքը: Երբ մահացավ Համաստեղը, Գուրգեն Մահարու մահախոսակարն էր տպագրվեց: Այդ ամենից բացի, հրապարակվող նյութերը մեծ մասամբ այնպիսիք էին, որ ազգային դեմք էին տալիս թերթին, և դա էր, որ դուր չէր գալիս ոմանց: Իսկ այդ լուսանկարը սարգսպես լցրել էր նրանց համբերության գավաթը, և որոշել էին ինձ ազատել աշխատանքից:  
Ես էլ պատրաստվել էի ճակատամարտ տալ, քանի որ, ինչպես ասում են, գործս արդար էր, համոզիչ էին փաստարկներս, իսկ թիկունքիս էլ ոչ այլ որ էր, քան ինքը՝ հետոսն ու գորավարը:  
Ծոտով կանչեցին վերին ստյան:  
Կուսարարությունը սկսեց ետալ իմ մեջ:  
Բայց գլխիս, ասես, սառը ջուր մաղեցին, երբ ՀԿԿ Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Անտոն Բոչինյանը՝ ժողովրդական ինստիտուցիայի օժտված մի մարդ, գրասեղանից ինչ-որ թուղթ վերցնելով, ասաց.

— Առաջարկություն կա Վահագն Դավթյանին ազատել «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրի պարտականություններից... և նշանակել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ: Համաձայն եք, ընկեր Դավթյան...  
Ուներս վեր քաշեցի: Անակրնկալից երևի ինչ-որ անմիտ բաներ շնչացրի ու դուրս եկա:  
Ուշ, բավականին ուշ իմացա, թե ինչպես հանկարծ կոմիտեի նախագահի տեղակալ դարձա: Իսկապես որոշել էին աշխատանքից ազատել ինձ, որոշման նախագիծ էին գրել ու ներկայացրել Քոչինյանին: Իսկ Քոչինյանը կարդացել ու մտավորապես հետևյալն էր ասել.  
— Ի՞նչ անուն դնելով եք մարդուն ազատում աշխատանքից: Անդրանիկի հուշարձանի լուսանկարը տպագրելու համար... Ի՞նչ կասի ժողովուրդը, ի՞նչ կասի Սփյուռքը: Չեղավ: Թե ուրիշ ճար չունեք և ուզում եք անպայման ազատել, մի նոր հաստիք կտամ, կոմիտեի նախագահի տեղակալ նշանակեցեք:  
... Երբ վերին ստյանից հիմնարկ էի վերադառնում, առաջինը դեմս լուսահոգի Գրիգոր Քեշիշյանը ելավ, որ այդ ժամանակ կոմիտեում էր աշխատում և գիտեք, որ ինձ վերև են կանչել:  
— Հը, ի՞նչ եղավ, — հարցրեց անհամբեր:  
— Նախագահի տեղակալ նշանակեցին...  
Նա էլ անակնկալի եկավ ու զարմանքով հարցրեց.  
— Բայց ինչո՞ւ ես տխուր...  
— Ձեռքիցս սիրած աշխատանքս ատան ու տեղը պաշտոն տվին: Մինչև հիմա գիտեի, թե ի՞նչ եմ անում և ի՞նչ եմ անելու, այսօրվանից ոչինչ չգիտեմ...  
ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ